Ամէն մի երկիր ուրեմն իր մէջ ունենալու է սեփական դոյութեան խարիսխը: Արտաքին ուժերի հանդէպ «օրիենտացիա» մշակելը կախուած է այն բանից, թէ այդ ուժերի եւ նրանցից ո՛ր մէկի բարեկամութիւնը առաւելագոյն բարիք է ապահովում տուեալ երկրին, բայց նաեւ, թէ ո՛ր արտաքին ուժը ամենէն մեծ չարիքը պատճառել կարող է իրեն: Մասնաւորելով մեր խօսքը Հայաստանի եւ հայութեան մասին, նրա «ռուսական օրիենտացիայի» հիմը կազմել է եւ կազմում է՝ ո՛չ թէ կամ ո՛չ այնչափ Ռուսաստանից սպասուող բարիքը, որչափ՝ Տաճկաստանի՛ պատճառած եւ նրանից սպասուող չարիքը: Ուրիշ խօսքով՝ հայութեան ռուսական օրիենտացիան ունեցել է եւ ունի ո՛չ թէ դրական, այլ բացասակա՛ն եղակէտ. ո՛չ թէ առաւելագոյն բարիք ապահովելու մեր ջանքը, այլ՝ նուազագոյն չարիքի իսկ գնով՝ առաւելագոյն չարիքը յետ մղելու մշտական մտահոգութիւնը:

Այսպիսով ուրեմն, առաջ է գալիս հայտաեկական, Հայաստանի եւ Տաճկաստանի խնդիրը, որ իր հերթին ամենասերտ կապը ունի հայ-ռուս եւ ռուս-տաճկական յարաբերութեանց հետ: Թէեւ քաղաքական խնդիրների այս բարդութեան մէջ արտաքին ուրիշ ազդակների, յատկապէս Անգլիային եւս վճռական դեր է վերապահուած եղել եւ է՛, բայց մեզ շատ հեռու պիտի տանէր, եթէ կամենայինք թէկուզ հարեւանցի կանգ առնել խնդրի այդ կողմի վրայ:

Այսչափը միայն ասենք, որ բրիտանական կայսրութեան խաղացած դերը դաժանօ՛րէն ճակատագրական է եղած Հայաստանի եւ հայ ժողովուրդի վերաբերմամբ, եթէ հաշուելու չլինենք—պայմանօրէն—1918–20 թ. կարճատեւ միջնարարը, որպէս սոսկական էպիզոդ ու թեքում՝ նրա դարաւոր քաղաքականութեան մէջ՝ Տաճկաստանի մի կողմից եւ Հայաստանի միւս կողմից: Անվերապահօրէն պնդել կարելի է, որ մեր ժողովուրդի բախտը բոլորովին այլ պատկեր պիտի ներկայացնէր այսօր, եթէ Մեծն Բրիտանիայի արեւելեան աւանդական քաղաքականութիւնը չլինէր յաղթանակ տանողը. մի քաղաքականութիւն, որի հիմքում դրուած է եղել Տաճկաստանի ամբողջականութեան պահպանման սկզբունքը: Հարկաւ, առաջնորդուած սեփական շահերի դիտակցութեամբ մի կողմից, եւ միւս կողմից՝ Ռուսաստանի առաջխաղացման երկիւղից: Ու այդ՝ աւելի քան մէկ դարու ընթացքին: Աղրիանապոլսի դաշնագիրը այլ կերպ խմբագրուած կը լինէր, ինչպէս նաեւ Սան Ստեֆանոյինը, մանաւանդ՝ վերջինս Բերլինի դաշնագրով փոխարինուած չէր լինի, եթէ ամէն անգամ անգլիական վէթօն ցցուած չլինէր առաջացող, յաղթական Ռուսաստանի առջեւ: Կոմս Բիկոնսֆիլտները մարմնացումն իսկ են՝ բրիտանական հակառուս — որ է նաեւ՝ հակահայ — դարաւոր քաղաքականութեան: Հայաստան այսօր դէթ աշխարհագրօրէն եւ ազգովին միացած կը լինէր ռուսական սահմանների ներսում, եթէ չլինէր այդ չար ոգին: Մեր ժողովուրդը նուազագոյն 4–5 միլիոն պիտի հաշուէր այսօր, նստած իր պապենական հողերի վրայ, թէեւ ենթակայ ռուսական դայլիսոնին — ճերմակ թէ կարմիր — եթէ չլինէր նոյն այդ, յաւերժ իշխող բրիկոնսֆիլտեան ոգին:

Բաւական է ասել, որ պատերազմի ընթացքին կատարուած մեծ եղեռնը պիտի խընայուած լինէր մեր դժբախտ ժողովուրդին, եթէ ամէն կարգի բերլինեան ժողովներում՝ բրիտանական վէթօները չլինէին ու հնարաւորութիւն տուած լինէին Ռուսաստանին՝ իր հարաւային սահմանները մինչեւ Բարձր Հայք ու Տարօն հասցնելու: Այո՛, ահռելիօրէն ճակատագրական է եղած Անգլիայի դերը մեր հարցում: Բիկոնսֆիլտները միշտ էլ յաղթող են հանդիսացել Արեւելքում, անգամ եթէ նրանց աթոռը Լոնտոնում Գլադստոններն են դրաւել: Փոփոխութիւն ներսում, բայց ոչ երբեք՝ դուրսը: Ու մեզ, այս միամի՛տ ժողովուրդին, հաւատացնողներ են եղել — եւ այժմ էլ կան, թէ Անգլիայում եւս քիչ չեն «հայասէրները», հայ դատի «անկեղծ պաշտպանները»: Խօսքը, ի հարկէ, սակաւաթիւ անհատների մասին չէ, ոչ էլ միսիոնարական այս կամ այն խմբակի, որոնցով, ինչու չէ՛, սկսել ու վերջացել է Անգլիայի «հայասիրական քաղաքականութիւնը»:

Մի պահ միայն, պատերազմից անմիջապէս վերջ, երբ արդէն անխուսափելի դարձաւ